Խրատ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ՍՊԾԱ 37 -2020

ք.Երևան « 31 » հունվարի 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին)՝ ի դեմս գլխավոր քարտուղար Նաիրի Հարությունյանի, որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ)՝ ի դեմս տնօրեն Սմբատ Լպուտյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր)՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժնի 01 խմբի 01 դասի 1041 ծրագրի «11007. Շախմատիստների պատրաստման ծառայություններ» միջոցառումը (այսուհետ՝ Ծրագիր «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 2019 թվականի դեկտեմբերի 26-ի № 1919-Ն որոշումը (այսուհետ միասին՝ Որոշում) կնքեցին սույն պայմանագիրը, (այսուհետ՝ Պայմանագիր), հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել Որոշումներով նախատեսված՝ մինչև 164,823,000 (մեկ հարյուր վաթսունչորս միլիոն ութ հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ գումար, իսկ Հիմնադրամը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Հիմնադրամի կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են Հավելված N1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու Հիմնադրամի կողմից կատարված իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Հիմնադրամի գործունեությանը.

2.1.2. Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Հիմնադրամը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Հիմնադրամը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին Միջոցառումների իրականացման ժամկետները (Միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Հիմնադրամն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ապահովման շրջանակներում աջակցել Հիմնադրամին.

2.3.2. քննարկել և ընդունել Ծրագրով նախատեսված Հիմնադրամի կողմից պատշաճ կատարված աշխատանքի (այսուհետ՝ Աշխատանք) արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ քան թերությունները հայտնաբերելուց 15 օր հետո, գրավոր հայտնել Հիմնադրամին.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4 Հիմնադրամը պարտավոր է՝

2.4.1 իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրով հիմք հանդիսացող նախահաշվի.

2.4.3. սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պետական մարմնին պատճառած վնասները:

2.4.4. սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.1 և 5.2 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.5. սույն պայմանագրով սահմանված կարգով յուրաքանչյուր միջոցառման ավարտից հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. Պետական մարմնի պահանջով ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները:

2.4.7. Պետական մարմնի պահանջով նրան հաղորդել Աշխատանքների կատարման ընթացքի մասին բոլոր տեղեկությունները:

2.4.8. ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը (հրամանով հաստատված կարգի համաձայն և ժամկետներում) ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Ֆեդերացիայում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.9. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25 -ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարը պետական մարմինը փոխանցում է կազմակերպությանը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N2 հավելվածի՝ վճարման ժամանակացույցի:

4.2 Պետական մարմինը վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ չներկայացված հաշվետվության համար պետական մարմնի կողմից հաստատված նախահաշվի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար, իսկ պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը, եթե Պետական մարմնին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տուգանք չկատարած աշխատանքի 0,5 (հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.2. Տույժի և տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից կամ պահանջում է հետ վճարել :

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագրով նախատեսված՝ Հիմնադրամի կողմից իրականացվելիք միջոցառումները սահմանվում են սույն պայմանագրի անբաժանելի մասը համարվող հավելվածով:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք	Հասցե՝ ք. Երևան, Շևչենկո 34
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 02560522
ՀՎՀՀ՝ 02698732	«Ամերիա Բանկ» ՓԲԸ
հ/հ՝ 900011032498	հ/հ 1570018417800100
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Ն. Հարությունյան	---------- Ս. Լպուտյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N1
2020 թ. հունվարի 31-ի
կնքված ՆՍՊՇԱ 37-2020 պայմանագրի

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

Իրականացվելիք միջոցառման անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը(դրամ)
1. «Շախմատիստների պատրաստման ծառայություններ» 1⊡ Ակադեմիայում ուսանող սաներ, մարդ -1000 2. Միջազգային գրոսմայստերների և վարպետների պատրաստում, մարդ - 1 3. Միջազգային մրցաշարերի կազմակերպում, մարզիչների վերապատրաստում, թիվ, հատ -4 4. Միջազգային մրցաշարերում Ակադեմիայի սաների հաղթանակների և զբաղեցրած մրցանակային տեղերի ընդհանուր թիվ, հատ - 8	Շախմատիստների պատրաստման ծառայությունների մատուցում	Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի սաների ամենօրյա անվճար ուսուցում, «միջազգային գրոսմայստերների և վարպետների պատրաստում« նրանց համար ուսումնամարզական հավաքների և մրցաշարերի կազմակերպում	**Արդյունքները** I, II, III և IV շախմատային կարգեր լրացրած սաներ Միջազգային մրցաշարերում հաղթած և մրցանակային տեղեր զբաղեցրած սաներ 1 միջազգային վարպետի կամ գրոսմայստերի նորմա լրացրած սաներ Սեմինարների միջոցով ՀՀ տարածքում դասավանդող մարզիչների որակավորման բարձրացում **Գնահատման չափանիշները** 1000 սան 1 բարձրակարգ շախմատիստ 4 հատ 8 հատ	30.12.2020 թ.	164,823,000
Ընդամենը					164,823,000

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՎՀՀ՝ 02698732 հ/հ՝900011032498 Գլխավոր քարտուղար՝ __________ Ն. Հարությունյան Կ.Տ.	«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ Հասցե՝ ք. Երևան, Շչեճնկո 34 ՀՎՀՀ՝ 02560522 «Ամերիա Բանկ» ՓԲԸ h/h 1570018417800100 Տնօրեն՝ __________ Ս. Լպուտյան Կ.Տ.

Հավելված N2
2020 թ. հունվարի 31-ին
կնքված ՀՍՊՇԱ 37-2020 պայմանագրի

«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամի 2020թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման չափի վճարման ժամանակացույց(աճողական)

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Ընդամենը տարեկան (հազար դրամ)	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից (հազար դրամ), ընդ որում՝											
		1 եռամսյակ			6 ամիս			9 ամիս			տարի		
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Ծրագիր	164,823▯0	32,260▯0	32,260▯0	32,260▯0	72,790▯9	72,790▯9	72,790▯9	113,320▯9	113,320▯9	113,320▯9	164,823▯0	164,823▯0	164,823▯0
Ընդամենը	164,823▯0	32,260▯0	32,260▯0	32,260▯0	72,790▯9	72,790▯9	72,790▯9	113,320▯9	113,320▯9	113,320▯9	164,823▯0	164,823▯0	164,823▯0

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02698732
հ/հ՝ 900011032498
Գլխավոր քարտուղար՝
_____ Ն. Հարությունյան

Կ.Տ.

ՀԻՄՆԱԴՐԱՄ

«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Շևչենկո 34
ՀՎՀՀ՝ 02560522
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
հ/հ 1570018417880100
Տնօրեն՝
_____ Լ.Ս. Լպունյան

Կ.Տ.